ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆ ՌՈՒԲԵՆ ԲԱԼՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով զանգվածային լրատվամիջոցի հրապարակման հիման վրա փաստաբան Ռուբեն Բալոյանի (արտոնագիր 1115) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

www.forrights.am լրատվական կայքում հեղինակ Ժաննա Ալեքսանյանի կողմից 21.07.2014թ. հրապարակվել է հետևյալ նյութը (**այսուհետ՝ Հրապարակում**)[1].

Վերնագիրը՝ «*«Արա, ես քո հետ փղայականով եմ խոսում, ոչ թե որպես փաստաբան»»:*

«Վարդան Պետրոսյանի գործով դատական նիստի ավարտից հետո, դատարանի բակում մոտենալով արդեն ավտոմեքենայում գտնվող փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանին սպառնալից տոնով ասում էր տուժող կողմի շահերը ներկայացնող Ռուբեն Բալոյանը, ինչը սկանդալի նախաբանն էր: Նիկոլայ Բաղդասարյանը չարձագանքեց Բալոյանին: Վերջինս, սակայն շարունակեց սպառնալիքներն ու մեղադրանքները, ապա նրան միացավ տուժող կողմը՝ հայհոյանքներ ու անեծքներ ուղղելով Վարդան Պետրոսյանի հարազատների հասցեին: Եվ եթե դատական կարգադրիչները չվերահսկեին իրավիճակը, բախումն անխուսափելի կլիներ:

Տպավորություն է, որ ոստիկանության նախկին աշխատակից Բալոյանը իրավական վեճը «փղայական» հարթություն տեղափոխելով անձնական խնդիր է լուծում: Նա, կարծես, հավակնում է դառնալ այս դատավարության գլխավոր դեմքը՝ ուշադրությունն ամբողջությամբ սևեռելով իր անձի վրա: Համենայնդեպս, այդպիսին էր իրավիճակը Աբովյանի դատարանի բակում նախորդ դատական նիստից հետո: Բալոյանն ուզում է ասել, որ ինքն է այստեղ պայմաններ թելադրողը: .....»:

Գտնում եմ, որ զանգվածային լրատվամիջոցի հրապարակման հիման վրա փաստաբան Ռուբեն Բալոյանի նկատմամբ պետք է հարուցել կարգապահական

[1] http://www.forrights.am/?ln=1&id_=12&page_id=272

22 հուլիսի 2014թ.
թիվ 271-Ա/ԿԳ-14101

վարույթ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:*

Օրենքի 39.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ***<u>փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝</u>*** *պետական, տեղական ինքնակառավարման և ոչ պետական մարմինների, ինչպես նաև այլ անձանց դիմումները (բողոքները),* ***<u>ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները</u>:***

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև Կանոնագիրք**) 5.1.2 ենթակետի համաձայն՝ ***փաստաբանը պարտավոր է մյուս բոլոր փաստաբաններին ընդունել որպես մասնագիտական աշխատակիցներ և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ:***

Հրապարակման մեջ նշված **«*«Արա, ես քո հետ տղայականով եմ խոսում, ոչ թե որպես փաստաբան»*** արտահայտությունը փաստաբան Ռուբեն Բալոյանի կողմից արտաբերելու և այն փաստաբան Նիկոյալ Բաղդասարյանին ուղղելու վերաբերյալ տեղեկությունը հաստատվելու դեպքում փաստաբան Ռուբեն Բալոյանի վարքագիծն առերևույթ կարող է հակասել Կանոնագրքի 5.1.2 ենթակետի պահանջին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ փաստաբաններին վայել չէ իրենց մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում նման անքաղաքավարի արտահայտություններով հակառակորդ կողմի փաստաբաններին (և ոչ միայն հակառակորդ կողմի փաստաբաններին) դիմելը:

Պալատը հարկ է համարում մատնանշել նաև այն հանգամանքը, որ փաստաբաններն իրենց մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում՝ անկախ իրենց կողմից վարվող գործի բնույթից, ինչպես նաև հանրային հնչեղությունից, պետք է ձեռնպահ մնան բռնի կամ վիրավորական բնույթ կրող արարքներից: Հատկապես դատապարտելի է փաստաբանների կողմից նման վերաբերմունքը միմյանց նկատմամբ՝ ի նկատի ունենալով նաև այն, որ անկախ գործի բնույթից և «հակառակորդ դիրքերում» հանդես գալու հանգամանքից, բոլոր փաստաբանները հանդիսանում են քաղաքացիական հասարակության ինստիտուտ համարվող մեկ մասնագիտական միավորման անդամ և շարունակում են լինել մասնագիտական գործընկերներ:

Հարկ է արձանագրել, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի նշանակում, որ փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտում և այդ հարցի վերջնական պատասխանը կարող է տրվել միայն կարգապահական վարույթի իրականացման արդյունքում՝ Պալատի խորհրդի համապատասխան որոշմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի, 39.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 4-րդ մասի, 39.3 հոդվածի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման Կարգի 10-րդ հոդվածի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Փաստաբան Ռուբեն Բալոյանի (արտոնագիր թիվ 1115) նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ Կանոնագրքի 5.1.2 ենթակետի պահանջի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ 14101):

2. ***Համապատասխան դիմում ներկայացնելու դեպքում՝ կարգապահական վարույթի կողմ՝ դիմող, ճանաչել փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանին:***

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանին՝

– կարգապահական գործը հինգ օրվա ընթացքում հանձնել հերթական կարգապահական գործ նախապատրաստողին.

– սույն որոշման օրինակն ուղարկել փաստաբան Ռուբեն Բալոյանին՝ պարզաբանելով նրա՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.[2] հոդվածով նախատեսված իրավունքները.

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

22 հուլիսի 2014թ.
թիվ 271-Ա/ԿԳ-14101
ք.Երևան